Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՄԻՆՉԵՎ 19-ՐԴ ԴԱՐ) (ՃՏՊ014)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Կիրակոսյան Լ.Վ., ճարտ.թեկն., պրոֆեսոր, Կանեցյան Ա.Գ., պատմ.գիտ.թեկն., դոցենտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել տարբեր դարաշրջաններում համաշխարհային ճարտարապետական մշակույթի զարգացման աստիճանը և ընդհանուր բնութագիրը, • պատմել ականավոր ճարտարապետների կյանքի ու ստեղծագործությունների մասին, • քննարկել վաղ շրջանի եգիպտական, Միջագետքի, ասորական, ուրարտական, հունական և հռոմեական հուշարձանների համաչափական և կոնստրուկտիվ համակարգերը, • բացահայտել տարբեր երկրների և տարբեր դարաշրջանների ճարտարապետության ոճական ուղղություններն ու առանձնահատկությունները: *(կարողություններ)* • վերլուծել ճարտարապետական մշակույթի ձևագոյացման ընդհանուր համակարգը՝ բացահայտելով ճարտարապետություն կերտող սոցիալ-պատմական իրավիճակը, • դասակարգել հորինվածքային և կոնստրուկտիվ բաղկացուցիչները, • բացահայտել առանձին ոճական ուղղությունների առանձնահատկությունները, • կատարել ճարտարապետական ստեղծագործության գրաֆիկական կերպարի վերլուծություն, • վերլուծել վաղ շրջանի եգիպտական, Միջագետքի, ասորական, ուրարտական, Կրետե միկենյան, հունական և հռոմեական հուշարձանների ճարտարապետական հորինվածքները:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Նախնադարի մշակույթի զարգացման փուլերի պարբերացումը և այդ շրջանում ճարտարապետության զարգացման նախադրյալներն ու հուշարձանների ընդհանուր բնութագիրը: • Հին Եգիպտոսի ճարտարապետության սոցիալ պատմական նախադրյալները, զարգացման փուլերը,

	հուշարձանների հիմնական տեսակներն ու շինարվեստը: • Միջագետքի Հին շրջանի ճարտարապետությունը: Քաղաքների հատակագծման սկզբունքները, շենքերի տեսակները, շինարարական տեխնիկան: • Ասորեստանի և Բաբելոնի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը: Շինությունների հիմնական տիպերն ու շինարվեստի առանձնահատկությունները: • Ասորախեթական քաղաքաշինությունը: Պալատական շինությունների ճարտարապետական առանձնահատկությունները և ընդհանրությունը Հին Արևելքի շինարվեստի հետ: Ուրարտական /Վանի թագավորություն, Արարատյան թագավորություն / քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը: • Էգեյան կամ Կրետե միկենյան քաղաքաշինությունը, ճարտարապետությունն ու շինարվեստը: • Հունական ճարտարապետությունը հոմերոսյան և արխաիկայի ժամանակաշրջաններում: Հունական օրդերային համակարգը: • Հունաստանի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը դասական ժամանակաշրջանում: • Հունական Փոքր Ասիայի ճարտարապետությունը հելլենիստական ժամանակաշրջանում: • Հռոմեական ճարտարապետությունը հանրապետական ժամանակաշրջանում: Բետոնի գյուտը և շենքերի հորինվածքային նոր տիպերը: • Հռոմի ճարտարապետությունը կայսերական ժամանակաշրջանում: Այդ շրջանի շենքերի տեսակները: • Հռոմեական ճարտարապետությունը Արևելքում:
Դասընթացի գրականության ցանկ	• Հարությունյան Վ.Մ. Հին աշխարհի ճարտարապետություն, Երևան, 1978: • Պոլլիո Մարկոս Վիտրուվիոս, Վասն ճարտարապետության, Հատվածներ, ՃՇՀԱՀ, Երևան, 2016: • Брунов Н.И. Очерки по истории архитектуры, т.1, Доклассовое общество, восточные деспотии, М., Л., Academia, 1937. • ВИА в 12 томах, Т.1, М.,1976. • ВИА в 12 томах , Т.2, М., 1976.